



ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.03.2014թ.

ք.Գյումրի

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
նախագահությամբ՝ դատավոր Էդ.Նահապետյանի

քարտուղարությամբ՝

Մ.Ասատրյանի

Մասնակցությամբ՝ հայցվոր՝

Ս.Աբրահամյան

ներկայացուցիչ՝

Հ.Մելքոնյան

պատասխանողի ներկայացուցիչ՝ Գ.Բաղդասարյան, Ա.Հախվերդյան

դռնբաց դատական նիստում քննելով թիվ ՎԴ5/0411/05/13 վարչական գործն՝ ըստ հայցի Սահականուշ Սուրիկի Աբրահամյանի ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ Շիրակի մարզպետի տեղակալի գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջները՝ տեղեկությունը սպառիչ տրամադրելուն պարտադրելու, վարչական տույժի ենթարկելու Շիրակի մարզպետի որոշման հիմքերը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին

Պ Ա Ր Ձ Ե Ց

Սահականուշ Սուրիկի Աբրահամյանը 07.08.2013 թվականին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան /Գյումրու նստավայր/ ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ Շիրակի մարզպետի տեղակալի գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջները՝ տեղեկությունը սպառիչ տրամադրելուն պարտադրելու, վարչական տույժի ենթարկելու Շիրակի մարզպետի որոշման հիմքերը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի 14.08.2013 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հրավիրվել են նախնական դատական նիստեր:

14.03.2014 թվականին հայցվորը և հայցվորի ներկայացուցիչը դատարան են ներկայացրել դիմում հայցից հրաժարվելու և գործի վարույթը կարճելու մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից, բացառությամբ սույն օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորը ներկայացնում է դիմում հայցից հրաժարվելու վերաբերյալ, ապա դատարանը երկշաբաթյա ժամկետով հրավիրում է դատական նիստ՝ այն քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամկետի կրկնում է հայցից հրաժարվելու իր դիմումը կամ պատշաճ ծանուցված լինելու պահանջներում չի ներկայանում դատական նիստին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:

